«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 , հեռ. 060621236, 2-36 , ss@ysmu.am

# «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանի, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ.Ավետիսյանի, կարիերայի կենտրոնի ղեկավար Խ.Ս.Մարգարյանի, ինչպես նաև միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ե.Ս.Սահակյանի, հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ա.Ավետիսյանի և իրավաբանական բաժնի պետ Մ.Ռ.Սողոմոնյանի զեկուցումները

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԵՊԲՀ ուսանողների ուսման վարձի վճարների ընդունման ժամկետը երկարաձգել 15 օրով՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 15-ը (18-10-09-01):
2. Ստեղծել <<Նոմինացիոն կոմիտե>>՝ պրոֆեսոր Ա.Վ.Ազնաուրյանի նախագահությամբ: Հանձնարարել նախագահին ներկայացնելու կոմիտեի անդամների թեկնածությունները՝ 10 օրյա ժամկետում (18-10-09-02):
3. Հաստատել՝

   1)<<Օտարերկրացի դիմորդների ընդունելության կանոնակարգը>> (18-10-09-03):

   2) <<Շարունակական մասնագիտական կրթության կատարելագործման և լրացուցիչ մասնագիտացման ծրագրերը>> (18-10-09-04):

   3) <<Ուսման վճարի փոխհատուցման (զեղչերի) մասին կանոնակարգի>> փոփոխությունները և լրացումները (18-10-09-05):

   4) <<Ֆակուլտետի գործունեության օրինակելի կանոնակարգը>> (նոր խմբագրությամբ) (18-10-09-06)

4. Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի 15.04.2009թ-ի թիվ 15 որոշմամբ հաստատված ԵՊԲՀ <<Ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը>> ( 18-10-09-07):
5. Վիրաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչ բ.գ.դ. Սուրեն Աղոյի Ստեփանյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում՝ որոշումը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների մասին հաշվիչ հանձնաժողովի զեկույցը ( 18-10-09-08):
6. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին ( 18-10-09-09):

ՆԱԽԱԳԱՀ՝ բ.գ.դ.,պրոֆ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ բ.գ.դ.,պրոֆ. Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ